40. ԹԻՋ ՈՒ ԿԵՍ, ԳԵՏՆԻ ՄՈՒՍԵՍ

Կէղի հարուստ հայ մի, գելնի էրթա քաղաք, ախչիկներուն կեսա.

— Ծեղի ի՞նչ խալավ բերիմ։

Ախչիկներ կեսին. «Անթարի բի, շապիկ բի»։ Պզտիկ ախչիկ լէ կեսա.

— Ընձի օղորթ մրջան ուլնիկ բի։

Հարուստ մարթ կէրթա քաղաք բազար կէնե. Էն էրկու ախչիկներուն անթարի ու շապիկ կառնե։ Գելնի զիգա վըր կարմուջի մե, վըր ճրուն, կեսա. «Վա՜յ, իմ ախչկա մրջան մոռցա»։

Կարմջի տկեն խալիվոր մե գելի, հ՝առեճ, կեսա.— Քու ախչրկան մրջան ես կիտամ.— կեսա,— գիտամ, գամ քու ախչիկ ուզիմ, ի՞նչ օր ոսփե շուրվա էփիք[1], գուգամ ուզիմ։

Կեսա.— Ոսփե շուրվա հ՝որի՞ կէփիմ, ես հարուստ մարթ ենք, ոսփե շուրվա հ՝որի՞ կուտինք։

Խայ կառնա զմրջան ու գիգա տուն։ Գիգա ճժերուն կեսա.

— Ոսփե շուրվա չէ՝փեք՝

Ճժեր կըսին.— Մենք հ՝որի՞ ոսփե շուրվա կէփինք, մենք կուտի՞նք, օր էփինք։

---

1 Բն. էփիմ (Ծ. Կ.)։

23—1086

Կմնա ժուք ու ժամանակ մե. ախչիկներ ոսփե շուրվա կէ-փին։ Խեր գիգա կտեսի օր ոսփե շուրվա էփերին, կեսա.

— Վա՜յ, մկա խալիվոր գիգա, իմ ախչիկ կտանի.

Զէն տեսավ, խալիվոր ճուկ էկավ, թիզ ու կես գետնի Մուսես, չորս թիզ բաժն լէ, էրկու թիզ մորուքն ա, գիգա, կառնի զախչիկ ու կէրթա։

Լուսուն գելի, խում միս կգնա ախչկա հ՝առեճ, կեսա.

— Էգա միս ուտիս, չուր ես գամ։

Խայ կէրթա, ախչիկ ինք ուրին կեսա. «Ես ի՞մալ խում միս ուտիմ, աստվածՈ». կթալա դռան ետև։

Հ՝իրիկուն խալիվոր գիգա, կեսա.— Կերա՞ր։

Կեսա.— Խա՜։

Կեսա.— Կխանչի՞մ։

Կեսա.— Կխանչա՜։

Կեսա.— Մի՜ս, դու գյո՞ր իս։

Կեսա.— Դռան ետև, ժեխնոցն իմ։

Գելի զէդ ախչիկ կխեխթա ու կթալա հ՝օդեն. կէրթա էդ ախչկա խոր տուն, միջնեկ քուրոջ կեսա.

— Վալլա, քու քուր շատ խիվանդ ա, քըզի կկխանչա։

Կառնե զէն քուր գիգա։

Լուսուն էլման խում միս գիտա, կեսա.— Զէդ միս կուտիս, չում ես գամ։

Ախչիկ ի՞մալ խում միս կուտա. կթալա մըջ խողին, թորվան ջուրթ կփորա, կդնա ինե։

Հ՝իրիկուն օր գիգա, ախչկան կեսա.— Կերա՞ր։

Կեսա.— Ա՜խ։

Կեսա.— Կխանչի՞մ։

Կեսա.— Կխանչա։

Կեսա.— Մի՜ս, դու դյո՞ր իս։

Կեսա.— Հանդե, պաղ խողի մեջն իմ։

Գելի զէն լէ կխեխթա, կտանի թալա հ՝օդեն։

Լուսուն էմլա կէրթա խոր տուն, կեսա մեկել քուրոջ.

— Վալլա՜հ, քու քուրվտիք էրկուս լէ բեհուշ խիվանդ ին, քըզի կկխանչին։ — Գելի կառնի զէն քուր լէ, գիգա։

Լուսուն էմլա խում միս կդնա ախչկա հ՝առեճ, կեսա.

— Իդա միս ուտիս, չում ես գամ։

Ախչիկ կեսա. «Ի՞մալ էնիմ, խում միս ի՞մալ ուտիմ». կկխանչա կատուն, կդնա հ՝առեճ, կուտա կատուն։

Հ՝իրիկուն խալիվոր գիգա տուն, կեսա.— Կերա՞ր։

Կեսա.— Խա՛.

Կեսա.— Կխանչի՞մ։

Կեսա.— Կխանչա։

Կեսա.— Միս, գու գյո՞ր իս։

Կեսա.— Ես, էսա տաք տեղն իմ, փորի մեշն իմ։

Կեսա.— Դու իմ կնիկն իս։ — Կէնա ուրին կնիկ։

Օր կէնա կնիկ, էնիկ կքնի, կնիկ կմնա իշար։ Մորուս կշփա, կտեսնա օր խինգ վեց բալնիս կա ինե։ Կառնե բալնիս, գելի հ՝օդի դռներ կբանա։ Օր կբանա, կտեսնա օր իլին ջանդակ ի ինե, գելու, առջու, իսնի։ Հ՝օդեմ էլ կբանա, էրկու ախպուր կթալա, մեկ օսկի ա, մեկ արծաթ։ Կլոխկնա օսկու, արծրթու դեմ, կէղի օսկի, արծաթ ու գելի։ Գելի ու կէրթա։

Շատ կէրթա, քիչ կէրթա, թագավորի տղին ռաստ գիգա։ Թագավորի տղեն կտանա կփսակե վրը ուր։

Խալիվոր օր կիշարնա, կտեսնա օր նա՛ մարթ, նա՛ իսան։ Գելնի կէրթա թագավորի տուն։ Կէնա, չէնա՝ թագավորի կնիկ չթողա մտնի ներս։ Գելի կէրթա։

Լուսուն խալիվոր գելնի սերսուփ, խորոտ գառ մե ու գիգա։

Թագավորի տղեն կեսա.— Կնիկ, տե՞ս ինչ խորոտ գառ ա, պախենք մրզի։

Կեսա.— Չէ՛, իլլահ պտի մորթես։

Կբերա մորթա, գրլնա բռոշ, կէփա, կտանի գրլնա խոր, խող գիտա վրեն։ Էդ օսկորներ կծլի, կէղի սոխ։

Թագավորի կնիկ ուր ջառյին կեսա.— Ջելնի էս սոխ քաղես ու փրթես մեջ բանի։

Օր մե ջառյեն կքաղե ղսոխ, կփրթա, կշիքա զադ, գիտա թագավորի կնկան։ Կնիկ կուտա, կխելռի։

Խալիվոր քրստու հմալ կէնե օր գիտնան, թը ախչիկ մեռուկ է, տանին խորին, հ՝ինք էրթա, հանա տանա։

Հմա խաբար կէրթա թագավորին։ Թագավոր գիգա, կեսա.

— Հորի՞ սոխ փրթիք ինե, չէ՞ ես ասի սոխ մի՛ փրթեք։

Իլաջ կէնա կսաղցու զուր կնիկ։

Էդ սոխի տեղաց օսկորներ լէ կտանա գրլնա ծով։ Կփրթի անղատի, ուր կնիկ լէ գելնի կսախնա։

Ու ուրանք կուտին, կխմին, կհասնին ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ծեր մուրազին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ քուլլի ջամաաթին։